Լեզուների եվրոպական օր 2014

Լեզուների եվրոպական օր՝ մարտահրավեր կարծրատիպերին և բազմազանության խրախուսում

Ստրասբուրգ, 26.09.2014

Լեզուների եվրոպական օրվան ընդառաջ ԵԽ Գլխավոր քարտուղար Թորբյորն Յագլանդն արեց հետևյալ հայտարարությունը.

«Սեպտեմբերի 26-ին մենք տոնում ենք Եվրոպայի հարուստ լեզվական բազմազանության օրը: Եկեք մի պահ վերհիշենք Անտուան դը Սենտ Էկզյուպերիի խոսքերն այն մասին, որ լեզուն հաճախ թյուրըմբռնման պատճառ կարող է լինել, կարող է օգտագործվել որպես զենք, որպես խտրականության կամ ստորացման միջոց:

Միաժամանակ մենք կարող ենք հասնել այն բանին, որ լեզուները դադարեն լինել թյուրըմբռնման պատճառ և ծառայեն որպես միջմշակութային երկխոսության և փոխադարձ հարգանքի բանալի: Սրան հասնելու համար մենք պետք է մարտահրավեր նետենք առկա կարծրատիպերին և խրախուսենք բազմազանությունը:

Եվրոպայի խորհուրդը հավասարապես հոգ է տանում Եվրոպայի բոլոր լեզուների համար՝ պաշտպանելով տարածաշրջանային և փոքրամասնությունների լեզուները, լեզվական իրազեկությունների դասավանդման և գնահատման համընդհանուր չափորոշիչներ մշակելով և անդամ-երկրներին աջակցելով լեզվակրթության ներառական մոտեցումների կիրառման հարցում:

Այսպիսով, մինչ մենք նշում ենք Լեզուների եվրոպական օրը Ստրասբուրգում, Գրացի Ժամանակակից լեզուների եվրոպական կենտրոնում և ողջ Եվրոպայում, փորձենք գիտակցել, թե ինչ կարևոր դեր են խաղում լեզուները հանդուրժող, խաղաղ և ներառական հասարակության կառուցման և պահպանման գործում:

***

Լեզուների եվրոպական օրվա և այդ օրվան նվիրված հարյուրավոր միջոցառումների մասին տեղեկատվություն կարող եք ստանալ՝ այցելելով հետևյալ կայքը՝ www.coe.int/edl:

ԼԵՕ մասին

Լեզուների եվրոպական օրվա նպատակն է խրախուսել լեզուների ուսումնառությունը ողջ Եվրոպայում:

Եվրախորհրդի նախաձեռնությամբ 2001 թվականից ի վեր ԼԵԶՈՒՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՕՐԸ նշվում է ամեն տարի՝ սեպտեմբերի 26-ին:

ԼԵՕ-ի նպատակներն են.

1. Հանրությանը իրազեկել լեզուների ուսուցման և լեզվական բազմազանության կարևորության մասին՝ խթանելով բազմալեզվությունը և միջմշակութային փոխըմբռնումը:

2. Զարգացնել և պահպանել Եվրոպայի լեզվական և մշակութային հարուստ բազմազանությունը:

3. Խրախուսել լեզուների շարունակական ուսուցումը դպրոցում և դպրոցից դուրս:

ԼԵՕ-ին նվիրված կայքը գործում է 28 լեզուներով: 2013թ.-ին ավելի քան 620 իրադարձություն էր գրանցվել կայքի միջոցառումների օրացույցում:
Այս թիվը ներկայացնում է միայն մի փոքր մասն այն իրադրաձությունների, որոնք սեպտեմբերի 26-ին կազմակերպվում են դպրոցների, համալսարանների, լեզվական և մշակութային ինստիտուտների և ասոցիացիաների կողմից Եվրոպայում և դրա սահմաններից դուրս: